# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում տեղի ունեցած հանրային լսում «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում նախատեսվող դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ

29.05.2025թ Ամասիա բնակավայր

ՕՐԱԿԱՐԳ: Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում նախատեսվող դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսում:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ՝ Սոնա Գևորգյանը, «Էմ ջի դիզայն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գոհար Ավագյանը, Գործող դպրոցի տնօրեն՝ Մարինե ամիրյանը և բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ. մայիսի 29-ին ժամը 15:00-ին Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում նախատեսվող դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, մեղմող միջոցառումները:

Խոսքը փոխանցվեց նախաձեռնող կողմի ներկայացուցիչ՝ «Էմ ջի դիզայն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գոհար Ավագյանին, ով ներկայացրեց դպրոցի ինժեներական լուծումների վերաբերյալ տեղեկատվություն:

Հնչեց հարց, Գոհար Մինասյանի կողմից, թե ոռոգման նպատակով ջուրը որտեղից է վերցվելու, ինչին ընկերության ներկայացուցիչը մանրամասնեց նախագծային փաստաթղթում, որ դրա համար հատուկ ռեզերվուար է նախատեսվել:

Հնչեց պահանջ համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանի կողմից, որ  հատուկ ուշադրություն դարձվի որ մեքենաները չկեղտոտեն ճանապարհը և որ ծանր տեխնիկան մոտենա  շրջանցող ճանապարհով և չփչացնի ասֆալտը: Բնակիչները խնդրեցին որ հետևողական լինեն որպեսզի վարորդները արագ չվարեն մեքենաները և միաձայն կողմ արտահայտվեցին նախատեսվող գործունեությանը:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ  «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝  Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում նախատեսվող դպրոցի կառուցման աշխատանքներին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության

փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան

«ԷՄ ՋԻ դիզայն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ.Ավագյան